ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/397-19 գրությամբ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 08.01.2019թ. թիվ 1/18-3/[1280149]-19 գրության հիման վրա, 16.01.2019թ. թիվ 26-3/397-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2.« Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով մրցույթին: Այնուհետև դեկտեմբերի 21-ին (ուրբաթ օրը)՝ ստացել է գրություն երկու անհամապատասխանությունների ճշտման համար: Հաջորդող աշխատանքային օրը՝ դեկտեմբերի 24-ին Ընկերության կողմից ուղարկվել է հավելված 2-ի ճշգրտված տարբերակը և լիազորագիրը՝ հաստատված Ընկերության տնօրենի ստորագրությամբ և կլոր կնիքով:

Ընկերությունը հայտնել է, որ մրցույթի փաթեթի ներկայացման օրը տնօրենի նույնականացման քարտը, որով պետք է դրվեր էլեկտրոնային ստորագրությունը, գտնվում էր Ընկերության հաշվապահի մոտ, որն էլ իր հերթին բացակայում էր քաղաքից, այդ իսկ պատճառով Ընկերության տնօրենը լիազորել է այլ անձի ստորագրելու հայտի փաթեթը: Այդ պահին լիազորագիրը էլեկտրոնային ստորագրությամբ հնարավոր չէր ստորագրել: Այնուհետև 28.12.2018թ. Ընկերության էլեկտրոնային փոստին ստացվել է նամակ՝ ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից, որտեղ նշված է, որ անհամապատասխանությունների շտկման հետ կապված զանգահարել 011-800-114 հեռախոսահամարին և կապ հաստատել Անի Աղաբաբյանի հետ: Ընկերությունը հայտնել է, որ նշված հեռախոսահամարը միշտ զբաղված էր և Ընկերության աշխատակցին հաջողվել է կապ հաստատել Անի Աղաբաբյանի հետ դեկտեմբերի 29-ին կամ 30-ին: Ընկերությունը հայտնել է, որ եթե ամսի 24-ին կամ 25-ին Ընկերությունը ստանար դիտողություն ճշգրտված փաստաթղթերի անհամապատասխանության վերաբերյալ, իհարկե Ընկերությունը կկատարեր համապատասխան շտկումները ևս: Իսկ հավելված 2-ի շտկված տարբերակի էլեկտրոնային ստորագրության անվավեր լինելը Ընկերության համար հասկանալի չէ, քանի որ Ընկերության տնօրենի քարտը ակտիվ է: Ընկերությունը հայտնել է, որ հնարավոր է, որ տեղի է ունեցել պահի հետ կապված տեխնիկական խնդիր, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է քարտուղարի կողմից: Ընկերությունը հայտնել է, որ լիազորագիրը տրվել է

Ընկերության տնօրենի ստորագրությամբ և Ընկերության կլոր կնիքով, որը ըստ Ընկերության օրինական է:

Ընկերությունը խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դիմումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը այս ընթացակարգի և ոչ մի փուլում երբեք չի ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին վերաբերվում է ՀՀ ֆինանսների նախարարության մերժման հիմքը (հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը):

Միաժամանակ Ընկերությունը խնդրել է հունվարի 18-ին կայանալիք նիստը անցկացնել Ընկերության տնօրենի բացակայությամբ, քանի որ վերջինս անձնական անհետաձգելի խնդիրներով գտնվելու է քաղաքից դուրս:

«Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 18.01.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.01.2019թ. թիվ 1/18-3/[1280149]-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներից մեկի՝ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02262902, էլ հասցե՝ yerevan.electro@gmail.com) կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտի հավելված 2-ում մրցույթի ծածկագիրը սխալ է գրված: Ինչպես նաև փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում ընկերության տնօրենի ստորագրության հետ, առկա չէ փաստաթուղթ, որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի տվյալ

ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի պահանջները՝ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին ծանուցվել է առկա անհամապատասխանությունների վերաբերյալ, սակայն վերջինս չի շտկել այն՝ ներկայացնելով ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ, ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ներկայացնում է «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 18.01.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 2-ում մրցույթի ծածկագիրը սխալ է գրված, ինչպես նաև փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում ընկերության տնօրենի ստորագրության

հետ, առկա չէ փաստաթուղթ, որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի տվյալ Ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2018թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է ծանուցել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները՝ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած հավելված 2-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ, լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/397-19 և 08.01.2019թ. թիվ 1/18-3/[1280149]-19 գրությունները՝ կից փաստաթղթերով, «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է, որ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.4-րդ ենթակետով սահմանվել է, որ ***սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.9 ենթակետով սահմանվել է, ***եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Նույն կետի 7.10-րդ ենթակետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի նույն կետի 7.18-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում ***մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հասցեագրում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները ***հայտում ներառվող՝*** իրենց կողմից հաստատվող ***փաստաթղթերը հասցեագրում են էլեկտրոնային***

թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի (այսուհետ՝ Կարգ) 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները ***հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման նիստի ընթացքում*** իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը***, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին

էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով*** մինչև կասեցման ժամկետի ավարտը ***շտկել անհամապատասխանությունը***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով ***սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 2-ում մրցույթի ծածկագիրը սխալ է գրված, ինչպես նաև փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում ընկերության տնօրենի ստորագրության հետ, առկա չէ փաստաթուղթ, որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի տվյալ Ընկերության անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2018թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է ծանուցել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները՝ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած հավելված 2-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ, լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ դեկտեմբերի 21-ին ստացել է գրություն երկու անհամապատասխանությունների ճշտման վերաբերյալ: Հաջորդող աշխատանքային օրը՝ դեկտեմբերի 24-ին Ընկերության կողմից ուղարկվել է հավելված 2-ի ճշգրտված տարբերակը և լիազորագիրը՝ հաստատված Ընկերության տնօրենի ստորագրությամբ և կլոր կնիքով:

Ընկերությունը հայտնել է, որ մրցույթի փաթեթի ներկայացման օրը Ընկերության տնօրենի նույնականացման քարտը, որով պետք է դրվեր էլեկտրոնային ստորագրությունը, գտնվել է Ընկերության հաշվապահի մոտ, որն էլ իր հերթին բացակայում էր քաղաքից, այդ իսկ պատճառով Ընկերության տնօրենը լիազորել է այլ անձի ստորագրելու հայտի փաթեթը, ուստի այդ պահին լիազորագիրը էլեկտրոնային ստորագրությամբ հնարավոր չէր ստորագրել:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ հավելված 2-ի շտկված տարբերակի էլեկտրոնային ստորագրության անվավեր լինելը Ընկերության համար հասկանալի չէ, քանի որ Ընկերության տնօրենի քարտը ակտիվ է: Ընկերությունը հայտնել է, որ հնարավոր է, որ տեղի է ունեցել պահի հետ կապված տեխնիկական խնդիր:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ փաստերը, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ, քանի որ վերջինիս կողմից շտկմամբ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով նախատեսված պայմաններին, մասնավորապես՝ լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի պահանջը հստակ շարադրված է Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.18-րդ և Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետերով, ինչպես նաև շտկմամբ ներկայացված հավելված 2-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ:

Այսպիսով, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման նիստի</u> ընթացքում*** իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են <u>անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ***, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա ***հանձնաժողովը <u>մեկ աշխատանքային օրով</u>***

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ ***առաջարկելով*** մինչև կասեցման ժամկետի ավարտը ***շտկել անհամապատասխանությունը***:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով ***սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի

1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 26-3/397-19 գրությամբ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**